

ՇԱՄԱԽՈՒՅ մեզ հաղորդում են թէ՛ Շամախույ Հայոց թիմահան գւրոցի նախկին հոգաբարձու Պ. Սարգիս Նաջարեանցը նոյն գւրոցի գումարը ո՛չ թէ իրեւ պարտք էր վերառել, այլ յայնժամեան Շամախույ թեմի կառավարիչ Անդրէաս Արքեպիսկոպոսը նորան հաւատարիմ մարդ ճանաչելով յանձնել էր նորան իւր Ղուբա քաղաքում ունեցած տօրօնապաճառութեան միջոցաւ շահացնելու համար: Եւ որովհետեւ տօրօնի ընկնելովը նոյն քաղաքում հարիւրաւոր վաճառականներ սնանկացան, նոյն սնանկութեանը հանդիպեցաւ եւ Պ. Սարգիս Նաջարեանցը, որով եւ ուսումնարանապատկան գումարը ենթարկուեցաւ ժամանակաւոր վնասուց. բայց շնայելով իւր բազմաթիւ գերգաստանի խղճալի դրութեանը եւ կամելով կանգնել իւրեանց տան պատիւը՝ ներկայ տարւոյս Յուլիս ամսում վճարեց Գւրոցի ներկայ Հոգաբարձուացը Գւրոցի 1388 թուրի 10 կողէկ պարտքը՝ որոյ համար սխալ էր եւ 2000 ռուբ. գրելը, եւ թէ՛ այն տունը, որի մէջ Առաջնորդը բնակվում է, վարձել է Շամախույ Կոնսիստորիայն Ս. Սինօզի գիտութեամբ եւ հրամանաւ եւ որը պատկանում է ո՛չ թէ Սարգիս Նաջարեանցին, այլ նորա բաժանուած Աղէքսանդր եղբորը. եւ Կոնսիստորիայի կապակցութիւնը եւս եղած է վերջնոյս հետ եւ ո՛չ Սարգիս Նաջարեանցի հետ, որի պարտուց հաշւել կարելի լինէր նորան վճարելի տան սլարաքը:

Մոսկուայի Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանի Ա՛նհափառ Հայրապետին մատուցած յայտարարութիւնից եւ անցեալ 1880 թուականի հաշուեցուցակից հետեւեալ տեղեկութիւնները քաղուած օրէն հրատարակել արժան կհամարիմք ի գիտութիւն մեր սիրելի Ազգայնոց:

1, Ի 1 էն Յունվարի 1880 ամի ընդ խնամատարութեամբ Աղքատանոցի գտանէին հետեւեալ 11 անձինքն — սառաւուռք թուշմալեան, Խարիկեան, Նազարեան, Սահարեան, Կուկուջանեան եւ Փիրատեան, օրիորդք Փիրադեանը երկու եւ Խիրոզինեան եւ Սուբատեան եւ ծերունին Լօմիա — Շվիլի, յորոց Կուկուջանեան եւ օրիորդք Փիրադեան, Խիրոզինեան եւ Սուբա-